

1. Համալսարանի «Ձարթոնք» հանգստյան տան ուղեգրի արժեքը 2017թ.-ի համար սահմանել.

- մեկ ուղեգրի արժեքը հունիս-սեպտեմբեր ամիսներին աշխատակիցների, ուսանողների և նրանց հետ հանգստացող ընտանիքի 1 անդամի համար, ով չի աշխատում համալսարանում՝ 7000 դրամ, իսկ բարելավված պայմաններով 2 սենյականոց համարների մեկ ուղեգրի արժեքը 8000 դրամ, ներառյալ ԱԱՀ 1 օրվա համար:
- աշխատակիցների ընտանիքի 1 անձից ավելի անդամների, ինչպես նաև մնացած/ոչ համալսարանի աշխատակիցների/ հանգստացողների համար՝ մեկ ուղեգրի արժեքը՝ 10000 դրամ, ներառյալ ԱԱՀ 1 օրվա համար:
- 1-3 տարեկան երեխաների հանգիստը կազմակերպել անվճար, եթե նրանք չեն զբաղեցնելու առանձին մահճակալ:
- 3-7 տերեկան երեխաների համար սահմանել 50% զեղչ:
- 7-ից բարձր տարիքի երեխաների համար գանձել ուղեգրի լրիվ արժեքը:

Ընդունել ի գիտություն, որ համաձայն ՀՀ արհկոմիտեի 24.11.2007թ-ի N 6 որոշման ՀԱԱՀ արհկոմի կողմից համալսարանի աշխատակիցներին հատուցվում է ուղեգրի օրական արժեքի 1000 դրամը:

2. Թույլատրել տուրիստական կազմակերպությունների հետ պայմանագրեր կնքելու և սոց. փաթեթներով հանգստացողներ ընդունելու համար: Սոց. փաթեթների շրջանակներում սահմանել մեկ անձի համար 13000 դրամ, ներառյալ ԱԱՀ-ը, 15% միջնորդավճարով:

3. Երրորդ և չորրորդ հարկերի սենյակների համար ուղեգրերի արժեքը սահմանել համաատասխանաբար 20%-ով ցածր:

Հիմք՝ Ռեկտորատի և արհմիության կոմիտեի 16.05.2015թ.
համատեղ նիստի որոշումը:

Ռեկտոր Ա.Թարվերդյան